ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ԱՌԱՋ ԵՎ 1922 Թ. ՈՒՆԵԶՐԿՈՒՄԸ

Անահիտ Խ. Աստոյան
Մատենադարանի Արխիվի և արխիվագիտության բաժնի գիտաշխատող, Հայաստան

Օսմանյան կայսրության տարածքում ապրող հայության տնտեսական գործունեության մասին ուսումնասիրությունները հարուստ նյութ են տրամադրում ազգային ինքնաճանաչողության համար, քանզի վեր են հանում հայ նկարագրի շատ կարևոր հատկանիշներ: Զմյուռնիահայությունն իր աշխատասիրության, ստեղծագործ մտքի, մեծ կարողությունների և ձեռներեցության շնորհիվ կարողանում է ազդեցիկ դիրք գրավել քաղաքի տնտեսական կյանքում: Հայ ժողովրդի բարեգործ ոգու փայլուն դրսևորումն է եղել Զմյուռնիայում ազգօգուտ գործունեություն ծավալած մեծաթիվ բարեգործական հաստատությունների գոյությունը: Զմյուռնիահայության քաղաքակրթական բարձր մակարդակի մասին են վկայում քաղաքի մեծաթիվ տպարանները, վարժարանները, ընթերցասրահները և մշակութային այլ հաստատություններ, որոնք Զմյուռնիան դարձնում են արևմտահայ մշակույթի և կրթության կարևորագույն կենտրոն: Այս ամենի շարժիչ ուժը թե՛ զմյուռնիահայության տնտեսական բարգավաճ վիճակն էր և թե՛ քաղաքակրթության և առաջընթացի նկատմամբ հայ ժողովրդի բնական ձգտումը:

Բանալի բառեր՝ բռնագրավում, ունեցվածքի կողոպուտ, տնտեսության թուրքացում, նյութական կորուստներ, քեմալականներ, հրդեհ, հրկիզումներ, Զմյուռնիայի աղետ, քրիստոնեական քաղաքակրթություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 28.11.2022: Ընդունվել է տպագրության՝ 18.05.2023:
The article was submitted on 28.11.2022 and accepted for publication on 18.05.2023.
Статья поступила 28.11.2022 и была принята к публикации 18.05.2023.

Ինչպես հղել՝ Անահիտ Խ. Աստոյան, «Զմյուռնիայի հայության տնտեսական վիճակն Առաջին աշխարհամարտից առաջ և 1922 թ. ունեզրկումը», *Ցեղասպանագիտական հանդես* 11, no. 2 (2023), 70-89:
How to cite: Anahit Kh. Astoyan, "The Economic Situation of the Armenians of Smyrna before the First World War and Deprivation of Property in 1922," *Tsʼeghaspanagitakan handes* 11, no. 2 (2023): 70-89.
Как ссылаться: Анаит Х. Астоян, "Экономическое состояние армян Смирны перед Первой мировой войной и их экспроприация в 1922 году," *Цехаспанагитакан андес* 11, no. 2 (2023): 70-89.

https://doi.org/10.51442/jgs.0047

Երիտթուրքերի քաղաքական գծի հետևորդներ քեմալականները կատարելագործում են հայերի և հույների ցեղասպանություններն իրագործելու համար հաջորդաբար կիրառվող մեթոդները՝ տեղահանությունները, կոտորածները, ունեցվածքի կողոպուտը և ցեղասպանության եզրափակիչ տարր համարվող՝ քրիստոնյաների բնակավայրերի հրկիզումները:

Զմյուռնիայի աղետի պատմության մեջ ցնցող ազդեցություն են գործում ոչ միայն հայերի և հույների՝ հարյուրամյակների և տասնամյակների ընթացքում մեծ տքնությամբ ստեղծած ահռելի նյութական կորուստների, այլև հայկական ու հունական քաղաքակրթությունների անգնահատելի արժեքների ոչնչացման մասին փաստերը:

Էգեյան ծովի ափին գտնվող Զմյուռնիան (Իզմիր) Փոքր Ասիայի ամենահին քաղաքներից է, Կ.Պոլսից հետո Օսմանյան կայսրության տնտեսական ամենամեծ ու ամենակարևոր կենտրոնը և երկրի առևտրական գլխավոր նավահանգիստը[1]: Այն Այդընն նահանգի կուսակալանիստ քաղաքն է եղել: Հայերն այստեղ են գաղթել 1380 և 1610 թթ. և մի քանի անգամ՝ 19-րդ դարի ընթացքում: 1918 թ. տվյալներով՝ Զմյուռնիայի բնակչության ընդհանուր թիվը կազմել է 350 000, որից 18 000-ը հայեր են եղել[2]: Այդընն նահանգն ունեցել է բարեխառն կլիմա, բարեբեր և լավ մշակված հողեր: Այստեղ ստանում էին բամբակ, ձիթապտուղ, նարինջ, կիտրոն, խաղող, թուզ, հացահատիկ, աֆիոն ևն: Նահանգը հարուստ է եղել անտառներով ու հանքերով, արտադրել է գորգեր, մետաքսյա և բամբակյա կտորեղեն, հագուստ, գինի, ձեթ, կաշի ևն[3]: Տեղի հայերը զբաղվել են առևտրով, արհեստներով և արդյունաբերությամբ, սակայն նրանց նախընտրած ասպարեզը առևտուրն է եղել: Կ.Պոլսի և Զմյուռնիայի հայկական առևտրական տներն անմրցելի են համարվել: 19-րդ դարակեսից շատ հայ առևտրականներ, հաստատվելով եվրոպական քաղաքներում, մասնավորապես՝ Լոնդոնում, Մանչեստրում, Ամստերդամում, Փարիզում, Վիեննայում, իրենց գրասենյակներն են բացում և մասնաճյուղեր հիմնում, Օսմանյան կայսրության շուկան նեղ համարելով՝ դիրքեր են գրավում միջազգային առևտրական շուկայում[4]: Պաքրճյան եղբայրները միջազգային համբավ վայելող զմյուռնիացի վաճառականներից էին: Նրանց առևտրական տունը մասնաճյուղեր է ունեցել Ավստրալիայում, Պերուում, Արգենտինայում, Ուրուգվայում, Մարրոկոյում, Եգիպտոսում, Անգլիայում, Բալկանյան երկրներում և այլուր[5]:

Նախապատերազմական շրջանում Զմյուռնիայի տնտեսության մեջ հայերը և

1 «Իզմիր», *Աշխատանք* լրագիր (Իզմիր), 13/26 հուլիսի 1913, 7:

2 Պետրոս Սիմոնեան, *Յուշամատեան: Հայկական Զմիւռնիան* (Փարիզ, Արաքս, 1936), 7, 9:

3 Հ. Ս. Խանճեան, *Պատկերազարդ նոր աշխարհագրութիւն, Բ մաս, Աշխարհագրութիւն Օսմանեան կայսրութեան* (Կ.Պոլիս, Նշան-Պապիկեան, 1902), 52-53:

4 Լեւոն Զորմիսեան, *Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան*, հ. Ա (Պէյրութ, Կ. Տօնիկեան եւ որդիք, 1972), 187-188:

5 Գ. Օ. Գալուստեան, «Զմիւռնիա եւ Զմիւռնիոյ Հայ գաղութը», *Յունահայ տարեգիրք* 1928, Բ տարի (Աթէնք, Նոր օր, 1928), 285:

հույները տիրական դիրք են գրավել: Այդ մասին է վկայում թուրք պատմաբան Նեդիմ Քարայելին: Ըստ նրա հայտնած տեղեկության՝ 1915 թ. Օսմանյան կայսրության տնտեսության ոլորտում անցկացված վիճակագրությունը պարզել է, որ Կ.Պոլսի, Էգեյան, Սևծովյան և Միջերկրական տարածաշրջաններում գործարարների և արհեստավորների 95-96 տոկոսը հայեր և հույներ էին[6]:

Զմյուռնիայի և շրջակա բնակավայրերում ապրող հայերի տնտեսական վիճակի մասին պատկերացում է տալիս Կ.Պոլսում հրատարակված «Ժողովուրդ» օրաթերթի 1919 թ. մի հրապարակում, ըստ որի՝ այս տարածաշրջանի հայերին են պատկանել 12 պանդոկ, 14 իջևանատուն, 2 փոքր իջևանատուն, 321 խանութ, 912 խանութ-կրպակ, 66 սրճարան, 8 ռեստորան, 25 գինետուն, 1 խաղատուն, 22 կապելանոց, 9 ամբար, 32 պահեստ, 22 գրասենյակ, 12 քարվանսարա, 3 բաղնիք, 710 արոտավայր, 35 բանջարանոց, հարդի 8 մթերանոց, 4 դեղատուն, անասնակերի 9 պահեստ, 130 ախոռ, 2 ջրաղաց, օճառի 4 ֆաբրիկա, երկաթագործական 1 գործարան, 1 մանարան, հրուշակեղենի 1 գործարան, մակարոնի 2 գործարան, ալյուրի 2 ֆաբրիկա, 62 փուռ, 4 կաշեգործարան, 50 սենյակից բաղկացած իջևանատներ (եկվորների համար նախատեսված), 1 հիվանդանոց, 161 ամառանոց, 4 825 բնակարան[7]:

Պետք է նշել, որ վերոհիշյալ ցուցակն ամբողջական չէ: Ահա այն համալրող տեղեկությունները, որոնք վերցված են Կ.Պոլսի և Զմյուռնիայի հայ մամուլում տեղ գտած գովազդներից, հրապարակումներից, թուրքական և այլ աղբյուրներից: Սպարտալյան ընտանիքին են պատկանել գորգի երկու գործարան[8]: Զմյուռնիայում հաստատված Սիլկիճյան, Իսպենճյան և Քեհեյան ընտանիքներին պատկանող արևելյան գորգերի ֆաբրիկաներն ու մթերանոցները մասնաճյուղեր են ունեցել Սալոնիկում, Կեսարիայում, Սեբաստիայում և Կ.Պոլսում[9]: Ճանիկ Էլմասյանին է պատկանել թզի մշակման մեծ գործարանը[10]: Թզի մշակման գործարանատեր էր նաև Արամ Համբարձումյանը[11], որին, ի դեպ, «թզի արքա» են կոչել[12]: Դավիթ Ռեիզյանին է պատկանել օղու[13], իսկ Հակոբ Պոսթանճյանին՝ «Էքլեր» կոչված հովանոցի մեծ գործարանը[14]: Նրա տնօրինությամբ է աշխատել Հերեքեի պետական գործարանի՝

---

6 Նեդիմ Քարայել, «Թուրք ժամանակակից կապիտալի աղբյուրը հայկական և հունական գույքն է», https://akunq.net/am/?p=42354, դիտվել է՝ 25.07.2022:

7 «Շահեկան վիճակագրութիւն մը Իզմիրի նահանգի Հայերու սեփական կալուածները», *Ժողովուրդ օրաթերթ* (Կ.Պոլիս), 11 սեպտեմբերի 1919, 37:

8 Խաչատուր Դադայան, «Զմյուռնիայի վախճանը», http://www.irates.am/hy/1438070607, դիտվել է՝ 08.10.2022:

9 Թէոդիկ, *Ամէնուն տարեցոյցը*, 1914, տարեգիրք (Կ.Պոլիս, Մ. Յովակիմեան, 1914), 420:

10 Osman Köker, *100 Yil Önce Türkiye'de Ermeniler* (Istanbul, Birzamanlar Yayincilik, 2005), 121.

11 *Bir zamanlar Izmir*, editör Osman Köker (Istanbul, Birzamanlar Yayincilik, 2009), 26.

12 Ս. Մ. Ծոցիկեան, *Արեւմտահայ աշխարհ* (Նիւ Եորք, Ա. Յ. Էյլէկեան, 1947), 209:

13 «Անմրցելին, օղու մեծ գործարան», *Արեւելեան մամուլ* օրաթերթ (Իզմիր), 20 դեկտեմբերի 1921, 2736:

14 «Հովանոցի մեծ գործարան Էքլէր», *Արշալոյս* օրաթերթ (Իզմիր), 16/29 օգոստոսի, 1908, 144:

Զմյուռնիայի մասնաճյուղը[15]: Այստեղ գործել է հայապատկան ծխախոտի գործարան[16]: Օհան Բագլավաճյանը, Գասպարյան եղբայրները և Մուրատյան-Գրմաճյան ընկերությունը զբաղվել են շղարշի և այլ նուրբ կերպասների վրա տպածոների արտադրությամբ[17]: Քաղաքում գործում էին «Թաթիկյան», «Մամուրյան», «Քեշիշյան», «Թելլալյան», «Շաքարյան» տպարանները[18] և «Զարթոնք»[19], «Արշալույս»[20], «Արարատ»[21], «Մամուրյան»[22], Գ. Ճարտարապետյանի[23] և Թոքաճյանի[24] գրատները:

Զմյուռնիայի Ազգային առաջնորդարանը հարուստ է եղել ազգապատկան շահութաբեր կալվածքներով: Դրանցից 25 տները, 9 խանութները, 5 մթերանոցները, 2 սրճարանները և 1 կառանատեղին զմյուռնիահայ բարերարների նվերն են եղել ազգին[25]: 1919 թ. դրությամբ Զմյուռնիայի ազգապատկան հաստատությունների արժեքը կազմել է 250 000, իսկ շահութաբեր կալվածքներինը՝ 250 000 օսմանյան ոսկեդրամ[26]: Հայերն անհամեմատ ավելի հարուստ են եղել, քան քաղաքում բնակվող մյուս ազգերի ներկայացուցիչները: Քաղաքի ամենաշքեղ շենքերը գտնվում էին առափնյակում՝ Ֆրանկների փողոցում: Այստեղ կառուցված ամենաշքեղ մարմարաշեն շենքը պատկանում էր Սպարտալյաններին[27]:

Զմյուռնիայի հայերի տնտեսապես բարգավաճ վիճակը նրանց բարեկեցիկ կյանք է ապահովել, հնարավորություն տվել հիմնելու մեծ թվով կրթական, մշակութային և մարմնամարզական հաստատություններ, նպաստել գործող եկեղեցիների պայծառակերպությանը: Այս հաստատություններին անդրադարձները վկայությունն են ոչ միայն նրանց նյութական մեծ կարողությունների, այլև քաղաքակրթական բարձր մակարդակի:

Զմյուռնիայում գործել են Հայաստանյայց առաքելական եկեղեցու Սբ Ստեփանոս,

---

15 «Կայսեգործարան Հէրէքէի մասնաճիւղ Զմիւռնիայ: Յակոբ Պօսթանճեան», *Արշալոյս*, 2/15 օգոստոսի, 1908, 140:

16 Խաչատուր Դադայան, *Հայոց տնտեսական ցեղասպանություն: Հայերի տնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում մինչև 1915* թ. (Երևան, էդիթ Պրինտ, 2016), 163:

17 «Իզմիրի կարեւորագոյն ճարտարարուեստը», *Բիւրակն* շաբաթաթերթ (Կ.Պոլիս), 3 մարտի 1907, 19/20, 465:

18 Պատասխանք Պատրիարքարանի հարցարանին, Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 8, վավ. 21/3:

19 «Զարթօնք հայկական գրատան կաղանդի նուէրները», *Արեւելեան մամուլ*, 26 դեկտեմբերի 1920, 2436:

20 «Կարեւոր», *Աշխատանք*, 30 նոյեմբեր/13 դեկտեմբերի 1913, 46:

21 «Արարատ գրատուն», *Արեւելեան մամուլ*, 9 փետրվարի 1922, 2772:

22 «Մամուրեան գրատուն», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ (Իզմիր), 11 հոկտեմբերի 1908, 42, 1008:

23 «Գ. Ճարտարապետեան գրատուն», *Արեւելեան մամուլ*, 5 դեկտեմբերի 1920, 2418:

24 «Գրասէր Հայերուն», *Աշխատանք*, 11/24 Յունուարի 1914, 52:

25 Սիմոնեան, *Յուշամատեան: Հայկական Զմիւռնիան*, 38-39:

26 Պատասխանք Պատրիարքարանի հարցարանին:

27 Խաչատուր Դադայան, *Հայոց առևտրատնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում XVդ. – 1915 թ.* (Երևան, Գասպրինտ, 2012), 63:

Սբ Լուսավորիչ, Սբ Հարություն եկեղեցիները[28], իսկ քաղաքի արվարձաններում՝ Գարաթաշի Սբ Կարապետ, Կյոզ Թեփեի Սբ Հոգեգալուստ, Գորտելիոյի Սբ Աստվածածին եկեղեցիները[29]: Քաղաքի կաթոլիկ հայերը եկեղեցի են ունեցել, իսկ ավետարանականները՝ աղոթատեղի[30]:

Զմյուռնիայի Սբ Ստեփանոսն իր վեհաշուք տեսքով, ճարտարապետական փայլուն մտահղացմամբ քաղաքի ամենագեղեցիկ եկեղեցին էր: Եվրոպացի զբոսաշրջիկները պարտադիր այցելում էին Սբ Ստեփանոս. այն ունեցել է յոթ դուռ, որոնցից գլխավորը զարդարված է եղել Անգլիայից բերված Սբ Պողոս և Սբ Պետրոս առաքյալների արձաններով: Եկեղեցու կառուցման համար հսկա գումարներ են ծախսվել: Միայն ներքին հարդարման համար օգտագործվել է «մարմարյա» կոչված հատուկ ծեփ, որի արժեքը կազմել է 6 000, իսկ եկեղեցու խաչկալները՝ գնահատվել 7 000 օսմանյան ոսկեդրամ: Դրանց վարպետը Անգլիայի թագաժառանգ Էդուարդի (հետագայում՝ Էդուարդ 7-րդ) շինարարական կառույցներում պաշտոնավարող Սեփոնիկ Պեզիրճյանն է եղել: Եկեղեցու ավանդատանը պահվում էին արծաթյա խաչեր, ճաճանչներ, 24 զույգ ոսկեզօծ սկիհներ, ոսկյա մեծ խաչ, բուրվառ, Կենաց փայտի ոսկեձույլ մասնատուփը, մարգարտաշատ թագեր, վակասներ, ոսկեթել ասեղնագործությամբ թանկարժեք հողաթափեր, շուրջառներ, անգին գորգեր, արծաթյա ադամանդակուռ մեծարժեք քահանայական սաղավարտներ և արժեքավոր ծիսական այլ առարկաներ: Սբ Ստեփանոսում պահվող եկեղեցական թանկարժեք առարկաներից է եղել 250 տարի առաջ Ամստերդամի հայ ոսկերիչների՝ եկեղեցուն նվիրած 36 մոմակալներով արծաթյա 6 աշտանակները և 6 ջահերը, որոնց վրա նրբակերտ զարդեր էին պատկերված: Տաճարը զարդարել է աստվածաշնչյան Դատաստանի տեսարանը պատկերող 17-րդ դարի հայ նկարչի յուղաներկ մեծ կտավը[31]: Զմյուռնիայի մյուս հայկական եկեղեցիները նույնպես հարուստ են եղել ծիսական թանկարժեք առարկաներով, տերունական տարբեր պատկերներով, ձեռագրերով և սրբերի մասունքներով:

Զմյուռնիան եղել է գրչության կենտրոն: Քաղաքում և շրջակայքում գրչագրվել և պահպանվել են 110 ձեռագրեր[32]: Սբ Ստեփանոս եկեղեցու բակում է գտնվել Զմյուռնիայի հայերի գերեզմանատունը, որտեղ ամենահինը 1555 և 1567 թթ. տապանաքարերն են եղել: Մարմարակերտ արձաններ, քանդակներ, խաչքարեր, տապանաքարեր, մահարձաններ, զմյուռնիահայության պատմության մասին կարևոր քարակերտ արձանագրություններ են եղել: Այստեղ կանգնեցված է եղել Անիի

28 Ա. Խ. Սաֆրաստյան, «Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության կողմից Թուրքիայի Արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակները և թաքրիրները», *Էջմիածին* ամսագիր (Էջմիածին), 1966, Է, 58:

29 Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան և իր հօտին աղէտալի 1915 տարիին*, խմբ.՝ Արայ Գալայճեան (Նիւ Եորք, St. Vartan Press, 1985), 337:

30 Ծոցիկեան, *Արեւմտահայ աշխարհ*, 211:

31 Գալուստեան, *Զմիւռնիա եւ Զմիւռնիոյ հայ գաղութը*, 317, 319-321:

32 Անահիտ Ասատրյան, «Հայկական Զմյուռնիա. ձեռագրական ժառանգությունը», *Բանբեր Մատենադարանի, տարեգիրք* 22 (2015), 517-536:

ավերակներից 1853 թ. բերված հրաշակերտ մի խաչքար[33]: Սբ Ստեփանոս եկեղեցու պարտեզի գերեզմանատնից բացի՝ հայերն ունեցել են նոր գերեզմանատուն, որտեղ եղել են թանկարժեք շիրմաքարեր, բարձրարվեստ մարմարյա մահարձաններ[34]: Գերեզմանատան կարգուկանոնը պահպանելու համար գործել է հատուկ հանձնաժողով[35]:

Կ.Պոլսի Ազգային կեդրոնական վարչության Ուսումնական խորհրդի 1901 թ. հրատարակած վիճակագույցի համաձայն՝ Զմյուռնիայում գործել են ազգային 10 և Մխիթարյան միաբանության 2 կրթական հաստատություններ[36]: Հետագայում հայ մեծահարուստների և բարեգործական ընկերությունների նախաձեռնությամբ և նրանց նյութական միջոցներով բացվել են կրթական նոր հաստատություններ՝ Զաքրյան, Պաքրճյան և Աշխատասիրաց ընկերության մանկապարտեզները[37], «Արդի դպրոց» հայ աղջկանց գիշերօթիկ և ցերեկային վարժարանը[38], Պոյաճյան վարժարանը, որն իր աշակերտներին տարբեր լեզուներ և առևտրական գիտելիքներ է ուսուցանել[39], Լեզվագիտական վարժարանը, որտեղ ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, իտալերեն, հունարեն են դասավանդել լեզվակիրները[40]: Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության միջոցներով գործել են երեկոյան և կիրակնօրյա վարժարանները[41]: Քաղաքում հաստատված են եղել Հոգատար որբախնամ ընկերության[42], Ազգային աղջկանց[43] և Ազգային կեդրոնական[44] որբանոցները: Զմյուռնիայի վարժարաններն ունեցել են հարուստ գրադարաններ և ուսումնական գույք: Մեսրոպյան վարժարանի թանգարանում պահվել են տարբեր քանդակներ, գեղանկարներ, բնագիտական հավաքածուներ, հայերեն և օտար լեզուներով 2 000 հազվագյուտ գրքեր, հնագույն դրամներ, հնագիտական իրեր և թանգարանային այլ առարկաներ[45]:

Զմյուռնիահայությունն առանձնակի հոգատարությամբ է վերաբերվել կրթական

---

33 Հ. Յակոբ վ. Քօսեան, *Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս*, հատոր Ա., Զմիւռնիա եւ Հայք (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1899), 58-78:

34 Սիմոնեան, *Յուշամատեան: Հայկական Զմիւռնիան*, 22:

35 «Պաշտօնական ազդ գերեզմանատան հոգաբարձութեան», *Արեւելեան մամուլ*, 20 դեկտեմբերի 1921, 2736:

36 «Վիճակացոյց Ազգային վարժարանաց Թուրքիոյ», տետր Ա (Կ.Պոլիս, Յ. Մատթէոսեան, 1901), 6-րդ աղյուսակ:

37 Սուրէն Պարթեւեան, «Զմիւռնիահայ կրթական հարկեր, Պաքրճեան Ազգ. մանկապատէզը», *Զմիւռնիահայ տարեցոյցը* տարեգիրք, Ա տարի (Իզմիր, 1920), 72-73:

38 «Արդի դպրոց» Հայ վարժարան աղջկանց գիշերօթիկ եւ ցերեկային», *Աշխատանք*, 13/26 սեպտեմբերի 1914, 87:

39 «Պոյաճեան վարժարան», *Աշխատանք*, 12/25 հունիսի 1914, 78:

40 «Լեզուագիտական վարժարան», *Դաշինք* օրաթերթ (Իզմիր), 8/21 հոկտեմբերի 1913, 1276:

41 «Գիշերային վարժարան Երիտաս. Քրիստ. ընկերակցութեան», *Դաշինք*, 6/19 հոկտեմբերի 1913, 1275:

42 «Ազգային անցուդարձ», *Արեւելեան մամուլ*, 26 հուլիսի 1920, 2287:

43 «Ազգային որբանոց», *Արեւելեան մամուլ*, 30 դեկտեմբերի 1920, 2439:

44 «Նուիրատուութիւնք Ազգ. Կեդր. որբանոցի», *Արեւելեան մամուլ*, 30 ապրիլի 1921, 2538:

45 Քօսեան, *Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս*, 130-134:

հաստատություններին՝ մեծ գումարներ տրամադրելով կրթական մակարդակի բարձրացման գործին: Պետրոս Պագրճյանը նոր մանկապարտեզի շինարարության համար տրամադրել է 1 000 օսմանյան ոսկեդրամ[46], իսկ Նազարեթ Պագրճյանի՝ ազգին նվիրած 6 շահութաբեր կալվածքներն ազգային գանձանակին տարեկան 140 օսմանյան ոսկեդրամ հասույթ են ապահովել: Ըստ կտակի՝ այդ գումարները պետք է ուղղվեին կրթական նպատակներին[47]: 1909 թ. օգոստոսին Զմյուռնիայի Քաղաքական ժողովի և Ուսումնական խորհրդի համատեղ ժողովում որոշում է կայացվում ամեն տարի լավագույն սանուհուն ուղարկել եվրոպական համալսարաններից մեկում մանկավարժություն ուսանելու[48]: Քաղաքի ուսումնական հաստատությունների տիկնանց խնամակալությունները ջանում էին իրենց նպաստը բերել նոր սերնդի կրթական մակարդակի բարձրացման գործին[49]: Վարժարանների բարենորոգիչ հանձնաժողովները զբաղվում էին կրթական հաստատությունների բարեկարգման աշխատանքներով[50]:

Սբ Լուսավորչյան հիվանդանոցը Զմյուռնիայի հայության բարեգործ ոգու մարմնացումն էր[51]: 1879 թ. Հակոբ և Հովհաննես Սպարտալյանների նյութական միջոցներով կառուցվում է մեծ պարտեզով շրջապատված Սբ Լուսավորչյան հիվանդանոցի քարաշեն, եռահարկ, 40 լուսավոր սենյակներ ունեցող շենքը: Կառուցվում են նաև հարակից շինություններ՝ սեղանատան, վիրաբուժարանի, բաղնիքի, մառանի, խոհանոցի, տեսչարանի, հոգեբուժարանի ու անկելանոցի առանձին շենքերը և սպասավորների համար հատուկ սենյակներ: Հիվանդանոցի մուտքի մոտ կանգնեցված են եղել ազգային բարերարներ Հակոբ և Հովհաննես Սպարտալյանների արձանները[52]: Հիվանդանոցը գտնվել է զմյուռնիահայության հոգածության ներքո: Քաղաքի հայկական թերթերը մշտապես տեղեկացրել են Սբ Լուսավորչյան հիվանդանոցին բարեպաշտ ժողովրդի նվիրատվությունների մասին:

19-րդ դարակեսից Զմյուռնիայում գործել են բարեսիրական և կրթամշակութային բազմաթիվ ընկերություններ և միություններ, որոնք հավաքական ուժերով նպաստել են ազգային տարբեր նպատակների իրագործմանը. հիմնել են կրթական հաստատություններ, լսարաններ, ընթերցասրահներ, հոգացել տարբեր ծախսեր, խնամել աղքատներին, որբերին և կարոտյալներին: 1908 թվականից հետո այդ ընկերությունների թիվը զգալիորեն ավելանում է (Որբախնամ տիկնանց հանձնախումբը, «Արտավազդ» թատերական, «Վարագ» երաժշտական, Ազգանվեր հայուհյաց,

---

46 Սիմոնեան, *Յուշամատեան: Հայկական Զմիւռնիան*, 21-22:

47 «Եօթնեկի լուրեր», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ (Իզմիր), 24 փետրվարի 1909, 9, 216:

48 «Եօթնեկի լուրեր», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ (Իզմիր), 11 օգոստոսի 1909, 33, 792:

49 «Ազգային անցուդարձ», *Դաշինք*, 3/21 հունվարի 1914, 1363: Տե՛ս նաև «Ազգային անցուդարձ», *Դաշինք*, 11-29 հունվարի 1914, 1370:

50 «Ազգային անցուդարձ», *Դաշինք*, 10-28 հունվարի 1914, 1369:

51 Ա. Տիվրիկեան, «Տեղեկագիր յանձնաժողովոյ», *Արեւելեան մամուլ* կիսամսեայ հանդէս (Իզմիր), 15 ապրիլ 1902, 8, 379:

52 Սիմոնեան, *Յուշամատեան: Հայկական Զմիւռնիան*, 20-21:

Դպրոցասիրաց ընկերությունները)[53]: Արևմտահայ ամենախոշոր բարեգործական հաստատությունները՝ Հայոց միացյալ ընկերությունը[54] և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը[55] մասնաճյուղ են հիմնում Զմյուռնիայում: Քաղաքում գործել են «Վասպուրական», «Վարդանյան», «Սահակյան» մարմնամարզական և Օսմանյան հայ որսորդաց ակումբները[56]: «Հայ կարմիր խաչ»-ն ունեցել է երկու մասնաճյուղ[57]: Քաղաքի ազգային կյանքին գործուն մասնակցություն են բերում Կրթասիրաց[58], Հոիփսիմյան ընկերասիրական[59], Մեսրոպյան ընկերասիրաց[60], Ուսումնասիրաց[61] ընկերությունները, Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցությունը[62], Հայ սպայից միությունը[63] և Հայկական միությունը[64]: Արհեստակից անդամների շահերի պաշտպանության նպատակով ստեղծվում են Պաշտոնեից[65], Կոշկակար գործավորների[66] և Հայ արհեստավորների[67] ընկերությունները: Քաղաքի «Զարթօնք» լսարանական ընկերության[68], «Կիլիկիա»[69] «Հայ ժողովրդի տան»[70], Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության[71], Օսմանյան հայ որսորդաց[72], Մեսրոպյան վարժարանին կից

53 Ասյա Գրիգորյան, Վաչիկ Բրուտյան, *Զմյուռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր (19-րդ դարի սկզբից մինչև 1922 թ.)* (Երևան, Իրավունք, 2007), 44-53:

54 Ս. Ամատեան, «Միացեալ ընկերութիւնը Իզմիրի մէջ», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ (Իզմիր), 16 սեպտեմբերի 1908, 38, 895:

55 «Լրաքաղ», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ, 9 սեպտեմբերի 1909, 37, 887-888:

56 Հայկ Դեմոյան, *Հայկական սպորտը և մարմնակրթությունը Օսմանյան կայսրությունում* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2009), 55:

57 «Հ. Կ. Խաչ», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 1 դեկտեմբերի 1920, 2414:

58 «Ազգային անցուդարձ», *Դաշինք*, 6/19 փետրվարի 1914, 1377:

59 «Նուագահանդէս եւ ցերեկոյթ», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 31 դեկտեմբերի, 1920, 2440:

60 «Մեսր. ընկերասիրացի հանդէսը», *Աշխատանք*, 8/21 փետրվարի 1914, 56:

61 «Եօթնեկի լուրեր», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ, 6 հունվարի 1909, 2, 47:

62 «Ե. Ք. Ընկերակցութիւն», *Դաշինք*, 11/24 հունվարի 1914, 1355:

63 «Նուիրտուութիւնք Ազգ. Կեդր. որբանոցի», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 30 ապրիլի 1921, 2538:

64 Սուրէն Պարթեւեան, «Զմիւռնիահայ դիմաստուերներ Արամ Թահտաճեան», *Զմիւռնիահայ տարեցոյցը*, Ա տարի, տարեգիրք (Իզմիր, Մամուրեան, 1920), 103:

65 Գրիգորյան, Բրուտյան, *Զմյուռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր*, 44-53:

66 «Տեղական լուրեր», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 8 սեպտեմբերի 1921, 2648:

67 «Հրաւէր Հայ արհեստաւորներուն», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 10 դեկտեմբերի 1920, 2422:

68 «Զարթօնք լս. միութեան դասախօսութեան մէջ», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 20 դեկտեմբերի 1921, 2736:

69 «Դասախօսութիւն Կիլիկ. ակումբի մէջ», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 11 օգոստոսի 1921, 2624:

70 «Յայտարարութիւն», *Աշխատանք*, 22 հունիսի /5 հուլիսի, 1913, 1:

71 «Հայ Սահմ.-Ռամկավար կուսակցութեան ակումբ», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ, 13 հունվարի 1909, 3, 72:

72 «Ազդ», *Աշխատանք*, 6/19 սեպտեմբերի 1914, 86:

գործող Մեսրոպյան ընկերասիրաց, Մեսրոպյան մարմնամարզական[73] ակումբներում պարբերաբար տեղի էին ունենում տարբեր թեմաներով բանախոսություններ:

Եղեռնը վերապրած հայ տարագիրները 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո վերադառնում են իրենց բնակավայրերը: Զմյուռնիայում հիմնված Տարագրելոց հանձնաժողովի նպատակն է եղել լուծել տարագրյալների բազմաթիվ խնդիրները[74]: Աղքատախնամ ընկերությունը մեծ ջանքեր է գործադրել գավառներից Զմյուռնիա հասած գաղթականության բազում կարիքները հոգալու համար: Զմյուռնիայի աղետից առաջ գաղթականության հաշվին քաղաքի հայ բնակչության թիվը հասել էր 30 000-ի[75]: 1918 թվականից հետո Զմյուռնիայում գործում են Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը և Հայ բոյ-սկաուտների միությունը, որոնք 1922 թ. միավորվում են[76]: Հայ սկաուտները 1921[77] և 1922[78] թթ. Զմյուռնիայում օլիմպիական խաղեր են կազմակերպում: Կ.Պոլսում տեղի ունեցած հայկական օլիմպիական խաղերին մասնակցել են նաև զմյուռնիահայ մարզիկներ[79]:

1861 թ. հիմնվում է Զմյուռնիայի Վասպուրական միության «Վասպուրական» թատրոնը, որ ներկայանալի թատերասրահ և բեմական հարմարություններ է ունեցել: Ներկայացումներով հանդես են եկել Կ.Պոլսի հայկական և արտասահմանից ժամանած տարբեր թատերախմբեր և երաժշտախմբեր[80]: «Աստղ» կինոթատրոնի դահլիճում պարբերաբար ներկայացումներ են տեղի ունեցել[81]: Հայ ակումբն ունեցել է նվագախումբ[82] և թատերախումբ[83], Քնար երաժշտասիրաց ընկերությունը՝ փողային նվագախումբ[84], Վարդանյան ուսումնասիրաց միությունը՝ երաժշտախումբ[85] և թատերախումբ[86], Հռիփսիմյան վարժարանը՝ 100 հոգուց բաղկացած երգչախումբ և թատերախումբ[87]:

---

73 «Իզմիրի Հայոց երախտագիտական անանման ցոյցը ի պատիւ Սահմանադրութեան», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ, 29 հուլիսի 1908, 31, 735:

74 «Ազդ», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 2 դեկտեմբերի 1920, 2415:

75 «Աղքատախնամէն», *Արշալոյս* շաբաթաթերթ (Իզմիր), 5/18 հունուարի 1911, 624:

76 «Իզմիրի Հայ Պոյ-Սկաուտներու միացումը Հ. Մ. Ը. Մ. հետ», *Հայ սկաուտ* կիսամսեայ հանդէս (Կ.Պոլիս), 1 փետրվարի 1922, 13, 206:

77 «Սկաուտիզմը Իզմիրի մէջ: Հայ սկաուտական Ա. ողիմպիականը», *Պատրաստ* կիսամսեայ հանդէս, (Իզմիր), 13 նոյեմբերի, 1921, 2:

78 «Իզմիրի Ողիմպիականները (1922 շրջան)», *Պատրաստ*, 20 օգոստոսի, 1922, 22:

79 «Կ.Պոլսոյ Ընդ. Ողիմպիականին Իզմիրի ներկայացուցիչը», *Պատրաստ*, 23 հուլիսի, 1922, 20:

80 Յ. Ճ. Սիրունի, *Պոլիս եւ իր դերը*, հ.Գ (Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ, 1987), 387-388:

81 «Սինեմա «Աստղ»», *Աշխատանք*, 21 դեկտեմբերի /3 հունվարի 1914, 49:

82 «Նուագահանդէս-պարահանդէս», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 5 փետրվարի 1922, 2775:

83 «Թատերական շքեղ ներկայացում», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 5 փետրվարի 1921, 2538:

84 «Սինեմա «Աստղ» (Գետեզերք)», *Աշխատանք*, 14/27 դեկտեմբերի 1913, 48:

85 «Գարաթաշի դաշտահանդէսը», *Աշխատանք*, 4/17 սեպտեմբերի 1913, 22:

86 «Ազգային», *Աշխատանք*, 14/27 դեկտեմբերի 1914, 48:

87 «Ազգային անցուդարձ», *Դաշինք*, 15/28 փետրվարի 1914, 1384:

1880 թ. հայտնի մանկավարժ Հ. Աբազյանի ստեղծած գրադարանն ունեցել է 15 000 գիրք և թերթերի մեծ հավաքածու[88]: «Հայ ժողովրդի տուն»[89], Հայ ուսանողական[90] և Հայ ընթերցասիրաց[91] միությունների և ՀՅԴ կուսակցության[92] ընթերցասրահները հարուստ են եղել բազմալեզու գրքերով: Զմյուռնիայի ազգային առաջնորդարանում գործել են ազգային վարչական մարմիններ՝ գավառական, երեսփոխանական, քաղաքական, կրոնական ժողովներ, տնտեսական, ուսումնական, դատաստանական, թաղական խորհուրդներ[93]: Այս վարչական մարմինները, ինչպես նաև քաղաքում գործող միություններն ու ընկերություններն ունեցել են իրենց դրամագլուխը, շենքերը, գույքը, շահութաբեր կալվածքները: Այսպես, օրինակ, «Հայ ժողովրդի տուն»-ն ունեցել է իր սեփական շենքն ու կարասիները[94]: Հոգատար որբախնամ ընկերությունն իր նյութական միջոցներով որբանոց է պահել[95], իսկ Երիտասարդաց օրիորդաց քրիստոնեական միությունը՝ կարի արհեստանոց[96]: Վերը հիշատակված հաստատությունների ողջ ունեցվածքը 1922 թ. դառնում է թուրքերի ավարը:

Թուրքական իշխանություններին անհանգստացնում էր հայերի տնտեսական հզորացումը: Նրանց նյութապես և տնտեսապես թուլացնելու թուրքական իշխանությունների միջոցներից մեկը տնտեսական բոյկոտն է լինում, իսկ մյուսը՝ հրդեհները, որոնք համակարգված կերպով են տեղի ունենում[97]: 1914 թ. առաջին ամիսներին երկրով մեկ քրիստոնյաների դեմ տնտեսական բոյկոտ է սկսվում[98]: Մարտ ամսին Այդընի նահանգի հայ և հույն առևտրականների և երկրագործների դեմ բոյկոտն էլ ավելի է սաստկանում[99]: Այն ծանր հետևանքներ է ունենում քրիստոնյա տնտեսվարողների համար և դառնում բախումների, ձերբակալությունների և սպանությունների պատճառ[100], որոնք նահանգի փոխկառավարիչն էր գլխավորում: Նա տեղի պաշտոնյաների հետ գաղտնի հանձնաժողով է կազմում, որն ավելի քան

88 Զաքարիա Միրդանօղլու, «Գյավուր Զմյուռնիայի հայերը», https://akunq.net/am/?p=26948, դիտվել է՝ 12.09.2022:

89 «Ընթերցարան», *Աշխատանք*, 8/21 փետրվարի 1914, 60:

90 «Ազգային», *Աշխատանք*, 1/14 փետրվարի 1914, 55:

91 «Ազգային», *Աշխատանք*, 4/17 հունվարի 1914, 51:

92 «Հ. Յ. Դաշնակցութեան խմբատեղւոյն բացման առթիւ Թ. Պոյաճեանի արտասանած ճառը, *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ, 4 նոյեմբերի 1908, 45, 1072:

93 Նույն տեղում, 791:

94 «Ազգային», *Աշխատանք*, 5/23 սեպտեմբերի 1914, 84:

95 «Ազգային», *Աշխատանք*, 2/19 մայիսի 1914, 66:

96 «Ազդ», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 1 ապրիլի 1920, 2207:

97 Գուժկան Սեբաստիոյ (Կ. Գաբիկեան), *Եղեռնապատում Փոքրուն Հայոց եւ Նորին Մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ* (Պոսթըն, Հայրենիք, 1924), 23:

98 «Առեւտրական պոյքոտը Հայերու դէմ», *Ազատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 16 փետրվարի / 1 մարտի 1914, 1440:

99 Թղթակից, «Թղթակցութիւններ», *Աշխատանք*, 7/22 մարտի 1914, 58:

100 «Տեղական լուրեր», *Դաշինք*, 10/25 փետրվարի 1914, 1391:

70 վարձկաններով համակարգում է բոյկոտը[101]: Թե՛ մայրաքաղաքի, թե՛ Զմյուռնիայի և թե՛ գավառական թուրքական թերթերը միաբերան պնդում էին, որ տեղի ունեցողը բնավ քրիստոնյաների դեմ տնտեսական բոյկոտ չէ, այլ մահմեդականների տնտեսական զարգացման համար ձեռք առնված միջոց[102]: Այս միջոցառումները 1910 թ. կեսերից Փոքր Ասիայում երիտթուրքական իշխանությունների սկսած թուրքացման քաղաքականության դրսևորումներից են[103]: Մահմեդական առևտրականներին աջակցելու, երկրի հարստությունը և առևտուրը թուրքերի ձեռքը կենտրոնացնելու երիտթուրքական իշխանությունների այս միջոցառումներն արդյունք չէին կարող տալ, քանի որ քրիստոնյա և մահմեդական առևտրականներին, արհեստավորներին ու արդյունաբերողներին հսկա անդունդ էր բաժանում: Գրիգոր Զոհրապը 1913 թ. կարծիք է հայտնում, որ թուրքական կառավարության ոչ մի աջակցություն չի կարող մահմեդականների համար կյանքի մակարդակի բարձրացում ապահովել, որին քրիստոնյաներն անդուլ աշխատանքի շնորհիվ էին հասել, ուստի քրիստոնյա տարրի տնտեսական գործունեությունը կասեցնելու համար թուրքական իշխանությունները զանգվածային կոտորածների կդիմեն և/կամ ունեցվածքը բռնազավթելու համար կստիպեն լքել երկիրը[104]:

Առաջին աշխարհամարտը երկրի տնտեսությունը թուրքացնելու, Փոքր Ասիան ոչ մահմեդական տարրից, հատկապես արևելյան նահանգներում մեծամասնություն կազմող հայերից ձերբազատվելու հնարավորություն է տալիս[105]:

1915 թ. Զմյուռնիայի հայերը զերծ են մնում զանգվածային տեղահանությունից և կոտորածներից, քանի որ հույների հետ մեծ կաշառքներ էին տալիս նահանգի կառավարիչ Ռահմի բեյին[106]: Զմյուռնիայի Ազգային առաջնորդարանը, 1919 թ. Կ.Պոլսի հայոց պատրիարքության հարցարանին ի պատասխան, տեղեկացնում է, որ 1915-1916 թթ. մասնակի տեղահանություններ են տեղի ունեցել Զմյուռնիայում և Այդընի նահանգի մյուս հայաբնակ վայրերում՝ Գլրքաղաճում, Էոդեմիշում, Դենիզլիում, Պերգամայի շրջանում, իսկ Գուշ-Ատայի հայ բնակչությունն ամբողջովին տեղահանվել է: Տեղահանվածների մեծ մասն աքսորվել էր Դեր Զոր, իսկ «լքյալ» գույքը՝ վաճառվել և տրվել մահմեդականներին: Պատերազմի շրջանում կառավարությունը բռնագրավում է Զմյուռնիայի Շահին խանի ախոռը, Սբ Լուսավորչյան հիվանդանոցը և Կրթասիրաց ընկերության մանկապարտեզը: Վերջին երկուսը զինադադարից հետո վերադարձվում են զմյուռնիահայությանը, սակայն ավերակ վիճակում: Թուրքերը

101 Մեղրունի, «Զազրելի ոճիր մը եւս (Արդիւնք ապուշ պօյքոթի)», *Աշխատանք*, 2/19 մայիսի 1914, 66:

102 Աւս, «Պոյքոթը», *Դաշինք*, 14 մարտի 1914, 1395:

103 Նեզաթ Օգյուն, «Թուրք ազգայնականության «արյունոտ» տնտեսական քաղաքականությունը» (Նեզաթ Օնարանի "Emval-i metruke olayi, Osmanli'da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarinin Türkleştirilmesi" գրքի գրախոսականը), http://akunq.net/am/?p=3874, դիտվել է՝ 06.08.2022:

104 Գրիգոր Զոհրապ, *Հայկական հարցը փաստաթուղթերու լոյսին տակ*, Երկերի ժողովածու, հ. Գ, (Երեւան, Գրականության և արվեստի թանգարան, 2002), 531-532:

105 Արմէն Քիւրքճեան, «Թուրքերուն՝ Թուրքիան թրքացնելու քաղաքականութիւնը», https://akunq.net/am/?p=15644, դիտվել է՝ 25.06.2022:

106 Արշակ Ալպոյաճեան, *Յուշամատեան Կուտինահայերու* (Պէյրութ, Տօսիկեան, 1961), 228:

Գուշ-Ատայի Սբ Աստվածածին եկեղեցին կողոպտելուց հետո այրում են. միայն շենքի արժեքը կազմում էր 5 000 օսմանյան ոսկեդրամ: Զինվորական իշխանությունները Մանիսայի Լուսավորչյան-Գայանյան վարժարանը և Մենեշմեի Սբ Սարգիս եկեղեցին որպես զորանոց ծառայեցնելուց հետո այրում են[107]:

Մուստաֆա Քեմալի ղեկավարած ազգայնական շարժման տարիներին շարունակվում է վերապրած հայության դեմ երիտթուրքերի վարած բռնի տեղահանության, կոտորածի և կողոպուտի քաղաքականությունը[108]: Ինչպես 1915 թ., այնպես էլ քեմալական շարժման տարիներին վերապրած 20-50 տարեկան հայ տղամարդիկ բռնությամբ զորակոչվում էին բանակ և բանվորական վաշտերում տաժանակիր աշխատանքներ կատարելուց հետո սպանվում: 20 տարեկանից ցածր և 50-ից բարձր տարիքի տղամարդիկ բռնի տեղահանվում են[109]: Քեմալականները, հետևելով երիտթուրքերի գործելակերպին, քրիստոնյաներին տեղահանելուց և կոտորելուց հետո հրկիզում էին նրանց բնակավայրերը[110]: Ըստ թուրք հեղինակներ Թայան Էսինի և Զելիհա Էթյոզի՝ հրդեհները հայերին և հույներին երկրից վտարելու, նրանց վերադարձը խոչընդոտելու, կողոպուտի հետքերը վերացնելու ծրագրի մի մասն են կազմել և եղել են Հայոց ցեղասպանությունն ամբողջացնող տարր[111]: Եվրոպական թերթերը մշտապես տեղեկացնում էին Փոքր Ասիայում քեմալականների կատարած եղեռնագործությունների մասին: «Daily Telegraph» պարբերականը, հենվելով ամերիկացի միսիոներների և չեզոք, անկողմնակալ անձանց վկայությունների վրա, հայտնում է, որ քեմալականների կատարած եղեռնագործությունները գերազանցում են 1915 թ. կոտորածները: Դրանք տեղի էին ունենում համակարգված կերպով, իսկ տարագրությունները շարունակվում և ընդարձակվում էին քեմալականների ենթակայության տակ գտնվող ողջ տարածքում: Իսկ այդ ամենի նպատակը երկրի քրիստոնյա ազգերի բնաջնջումն էր[112]:

1922 թ. ամռանը քեմալականներն ավարտին են հասցնում 1915 թ. տեղահանություններից և կոտորածներից զերծ մնացած, տնտեսական կարևորություն ունեցող Քյութահիայի գավառի հայաթափման գործը և յուրացնում տարածաշրջանի տնտեսությունն իրենց ձեռքում պահող հայերի ողջ ունեցվածքը[113]:

Զմյուռնիան և Կ.Պոլիսը 1915 թ. արհավիրքներից զերծ էին մնացել: Թեև քե-

107 Պատասխանք Պատրիարքարանի հարցարանին:

108 Անահիտ Աստոյան, *Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ.* (Երևան, Մատենադարան, 2013), 114:

109 Արշակ Ալպոյաճեան, «Հայ ազգը 1921ին», *Վերջին լուր* օրաթերթ (Կ.Պոլիս), 17 հունուար 1922, 2077:

110 «Երկու հայ գյուղեր հրկիզուած», *Երկիր* օրաթերթ (Կ.Պոլիս), 7 հոկտեմբերի 1920, 321: Տե՛ս նաև «Չէնկիլէր հրկիզուած», *Հայաստանի կոչնակ* շաբաթաթերթ (Նիւ Եորք), 21 մայիսի 1921, 21:

111 Ֆերդա Բալանջար, ««Հրդեհը» որպես ցեղասպանությունն ամբողջացնող տարր», http://akunq.net/am/?p=43523, դիտվել է՝ 30.08.2022:

112 «Սարսափելի յայտնութիւններ քեմալական նոր խժդժութեանց մասին», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 17 մայիսի 1922, 2857:

113 Անահիտ Աստոյան, *Բուրսայի նահանգի հայության տնտեսական վիճակը և նյութական կորուստները Հայոց ցեղասպանության տարիներին* (Երևան, Գիտություն, 2017), 255, 259, 270-271:

մալականները Կ.Պոլսի հայերին չեն տեղահանում, սակայն 1922-1923 թթ. նրանց ունեզրկելու գործընթաց են սկսում[114], որն իր ավարտին պետք է հասներ 1942 թ. նոյեմբերի 11-ին Թուրքիայի Հանրապետության Ազգային մեծ ժողովի «Ունևորության տուրքի մասին» օրենքի ընդունմամբ: Դրա կիրարկումը հանրապետական իշխանություններին հնարավորություն է տալիս տիրանալու պոլսահայերի՝ աչքի զարնող հարստությանը[115]:

1922 թ. սեպտեմբերի 9-ին քեմալական զորքերը մտնում են Զմյուռնիա, գրավում ռազմական նշանակություն ունեցող օբյեկտները, քարափները և քաղաք տանող բոլոր ճանապարհները. այդ ամենին հաջորդում է Քեմալի մուտքը քաղաք[116]: Քեմալականների՝ քաղաք մտնելուց քառորդ ժամ անց խուժանը, կանոնավոր զորքի առաջնորդությամբ, կողոպտում է շուկան՝ ողջ հարստությունը թուրքական թաղամասեր տեղափոխելով: Այնուհետև սկսվում է հայ և հույն խաղաղ բնակչության կոտորածն ու ունեցվածքի կողոպուտը[117]: «Լամարթին» և «Սեբոս» շոգենավերով Զմյուռնիայից մեկնող ուղևորների պատմածների համաձայն՝ թուրքերն իրենց մոլեգնությունն առաջին հերթին թափում են հայկական թաղի վրա. քաղաքի հրդեհն այստեղից է ծայր առնում և ամենասարսափելի բռնություններն այստեղ են կատարվում: «Daily Telegraph» և «Chicago Tribune» թերթերի թղթակիցների վկայության համաձայն՝ թուրքերը հայկական բոլոր տները և խանութները կողոպտելուց հետո թաղը կրակի են տալիս[118]: 1922 թ. սեպտեմբերի 20-ին Աթենքի «Christian Science Monitor» լրատվական գործակալությունը հայտնում է, որ Քեմալը Զմյուռնիան հրդեհելուց առաջ կողոպտել է տվել քաղաքի պահեստները, խանութներն ու տները: Նրա հրամանով՝ 200 000 000 անգլիական ոսկի արժողությամբ ավարն Անկարա է տեղափոխվել[119]: Անգլիական պաշտոնական տեղեկագրերի համաձայն՝ թուրքական գրավումից հինգ օր անց, բացի թուրքական թաղերից, քաղաքի մնացած թաղերը մոխրի են վերածվում[120]: Ըստ ԱՄՆ և դաշնակից պետությունների հյուպատոսների հայտնած տեղեկությունների՝ առավել մեծ կորուստներ կրել է հայկական թաղը[121]: Մի քանի օրվա ընթացքում Զմյուռնիայում ընդհանուր առմամբ մոխրակույտի են վերածվել ավելի քան 50 000 տուն, 21 եկեղեցի, 28 վարժարան, 5 հյուպատոսարան, 7 ակումբ, 5 դրամատուն[122]:

---

114 Աստոյան, *Դարի կողոպուտը,* 122-126:

115 Ռուբեն Մելքոնյան, ««Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության թուրքացման քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում», *Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ* հանդես (Երևան, 2008), 127-143:

116 «Ինչպէս մտան թուրքերը Իզմիր: Քրիստոնեայ բնակչությունը փախած է: Մուստաֆա Քեմալի Իզմիր ժամանումը», *Վերջին լուր,* 11 սեպտեմբերի 1922, 2590:

117 «Նոր մանրամասնութիւններ Իզմիրի աղետին շուրջ», *Երկիր,* 19 սեպտեմբերի 1922, 835:

118 «Իզմիրի ահաւոր եղեռնը: Նախ կողոպուտ եւ յետոյ ջարդ եւ հրդեհ: Թուրքեր յարձակուած են Հայոց թաղի վրայ», *Վերջին լուր,* 19 սեպտեմբերի, 1922, 2597:

119 «Թուրքեր՝ հրդեհելէ առաջ թալանած են Իզմիրը», *Հայաստանի կոչնակ* (1922), 39, 1282:

120 «20 000 տուն այրեր է Իզմիր», *Վերջին լուր,* 18 սեպտեմբերի, 1922, 2596:

121 «Օգնութեան գործը Իզմիրի մէջ», *Ճակատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 24 սեպտեմբերի 1922, 2997:

122 «Զմիւռնիահայ կեանքը զինադադարէն յետոյ: Ահաւոր փլուզումը», *Նոր օր* (Աթէնք), 1924, 38:

Կ.Պոլսում հրատարակվող թուրքական «Իլերի» պարբերականի խմբագրապետը, Զմյուռնիայի աղետից հետո լինելով քաղաքում, ընթերցողներին տեղեկացնում է, որ որոշում է կայացվել Զմյուռնիայից մեկնող հայերից և հույներից մնացած ապրանքները ցուցակագրել և փոխանցել բանակին: Իսկ Զմյուռնիայի մաքսատանը կատարված քննության համաձայն՝ քաղաքում 500 000 ոսկեդրամի արժողությամբ անտեր ապրանք է մնացած եղել[123]: Թուրքական «Վաթան» թերթի 1923 թ. հուլիսյան համարներից մեկը տեղեկացնում է, որ մեծ հարստության տիրանալու հույսով թուրքերը շտապով գնում էին Զմյուռնիա: Շատ այգիներ, որոնք պատկանում էին քրիստոնյաներին, անցնում են թուրքերին և անմշակ մնում: Երկրագործության նախարարը հանդիմանական գրություն է հրատարակում, որտեղ սպառնում է հետ վերցնել այգիները, եթե չմշակվեն: Խաղողի և թզի բերքը ողբալի վիճակում է եղել: Երկու հայ վաճառականներ, որ թզի և խաղողի արտահանմամբ էին զբաղվում՝ փախել էին երկրից: Թուրքերը փորձում են համոզել, որ վերադառնան, սակայն այն թուրք վաճառականները, որոնք ցանկանում էին առանց մրցակցության տեր դառնալ առևտրական շուկային, արգելք են լինում նրանց վերադարձին[124]:

Զմյուռնիայի հայերի նյութական կորուստների մասին մոտավոր պատկերացում կազմելու համար ներկայացնենք մեկ անձի և մեկ առևտրական հաստատության մասին տվյալներ: Նշանավոր բանասեր և մատենագետ Տրդատ եպիսկոպոս Պալյանը Զմյուռնիայի աղետի օրերին եղել է քաղաքում և ապրածի մասին իր սան Վահան Իսպերչյանին ուղղած նամակում գրել հետևյալը. «Ես 1922 Մեպտեմբեր ամսոյ սկիզբները, Մաղնիսայէն Իզմիր իջած էի եղբօրս մէկ տունը բնակելու համար, կարծելով թէ Մուսթաֆա Քէմալը հոն գալու իսկ ըլլայ, Իզմիրի մէջ որեւէ դէպք չը պատահիր ու հանգիստ ժամանակ կ'անցընենք, բայց դժբախտաբար մեր մտածումը պարապի ելաւ. Մուստաֆա Քէմալի եւ իւր անօրէն զօրքերու վայրագութեան միջոցաւ ամենամեծ հալածումի, կողոպուտի ենթարկուեցայ, ինչպէս նաեւ բոլոր Հայերը. Իզմիրի մէջ տառապանքը մեծ էր, ամբողջ Հայոց թաղը կրակի տուին Քէմալի զօրքերը, կարգը երբ մեր թաղին եկաւ, ինչպէս ուրիշ տուներու կ'ընէին, երեք չորս օթոմոպիլ բերին տունիս առջեւ, եւ իմ ամբողջ գոյքերս զորս բերած էի Մաղնիսայէն, դրամներս, նամակադրոշմի մեծ հաւաքածոյս, 30 տարիներէ ի վեր աշխատած ու ժողոված ազգագրական հաւաքածոներս ու ուսումնասիրութիւններս, պարսկական երկու թանկագին գորգերս, վեղարներս, փիլոններս, փակեղներս, եպիսկոպոսական պնակէս, խաչ եւ ամբողջ հագուստներս ու զգեստեղէններս, թղթեայ եւ մագաղաթեայ հին ձեռագիր եւ 600 հատ գրադարանիս տպագիր գիրքերս, եղբօրս 40 պարկ չամիչը եւ տանը գոյքերը եւն. այդ օթոմոպիլներու մէջ լեցնելով առին տարին, եւ անմիջապէս ալ տունին մէկ ծայրէն կրակ տուին, ինչպէս ըսի՝ կ'ընէին ուրիշ հայ տուներու ալ, որուն վրայ ստիպուեցայ առանց տեսնուելու տունէն փախչիլ աղտոտ միակ վերարկուով մը. այսպէս փողոցէ փողոց քանի մը օրեր ասդին անդին միայն հաց ուտելով թափառելէ յետոյ, վերջապէս քարափի վրայ տուն մը մտանք հանգստանալու համար. տասը

123 «Կեանքը Իզմիրի մէջ», *Ճակատամարտ*, 4 հոկտեմբերի, 1922, 3005:

124 «Զմիւռնիոյ վիճակը», *Հայաստանի կոչնակ*, 1923, 30, 954:

տասնեւհինգ օր վերջը շատ դժուարութեամբ յունական շոգենաւ մը մտանք եւ հասանք Աթէնք, թէեւ օր մըն ալ զիս բանտարկեցին Իզմիր»[125]:

Ալեքսանդր Շիրվանզադեն, Մուդրոսի զինադադարից հետո լինելով Զմյուռնիայում և այցելելով Սիվրիհիսարյան-Ազնավորյան առևտրական ընկերության վաճառատները և մթերանոցները, այն տպավորությունն է ստացել, որ ընկերության մեջ ամբարված ապրանքները Կովկասի ողջ բնակչության մեկ տարվա կարիքները կարող էին բավարարել[126]:

Զմյուռնիայի աղետը Հայոց և Հունաց ցեղասպանություններն ամբողջացնող մի գործողություն է: Երկու ժողովուրդների տեղահանությամբ և բնաջնջումով թուրքերն ազատվում են տնտեսություն մեջ իրենց հզոր մրցակիցներից և տիրանում նրանց ունեցվածքին: Ըստ թուրք պատմաբան Նեդիմ Քարայելիի՝ Թուրքիայի Հանրապետության առկա կապիտալի աղբյուրը բռնագրավված հայկական և հունական գույքն է[127]:

Քեմալական արշավանքը ջնջում է Զմյուռնիայի հունական և հայկական մշակույթի բազմաթիվ մեծարժեք կոթողներ: Միայն Սբ Ստեփանոս եկեղեցում պահվել են 9 ձեռագրիր մատյաններ[128], որոնք կորստյան են մատնվում, կողոպտվում է եկեղեցու գույքը[129]: Նույն բախտին են արժանանում նաև Զմյուռնիայի մյուս եկեղեցիները: Քեմալականները Սբ Ստեփանոս և Այա Ֆոթինի եկեղեցիները կողոպտելուց հետո ուժանակներով պայթեցնում են, իսկ մարմարե գեղակերտ սյուները տեղափոխում Անկարա՝ զարդարելու նոր մայրաքաղաքը[130]: Կողոպտվում և ոչնչացվում է Զմյուռնիայի հունական թանգարանը, որտեղ ցուցադրված էին Ալեքսանդրյան, հռոմեական, բյուզանդական շրջանների և միջին դարերի հնագիտական բացառիկ և մեծարժեք նմուշներ: Այստեղ էր պահվում հայոց Լևոն արքայի գահի հենարանը, որի վրա քանդակված էին արքայի գլուխը, թագը, ձեռքը: Թանգարանի մատենադարանն ունեցել է 32 000 տպագիր և 2 000 ձեռագիր գիրք[131]: Քանդվում են քաղաքի հունական, ֆրանսիական, անգլիական, ամերիկյան, գերմանական եկեղեցիներն ու կրթական հաստատությունները[132]:

Հոմերոսի ծննդավայր, 3 000 տարվա պատմություն ունեցող Զմյուռնիան, որ

---

125 Տրդատ Պալեան, *Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին* (Երեւան, Քնասէր, 2002), 231-232:

126 Գալուստեան, *Զմիւռնիա եւ Զմիւռնիոյ հայ գաղութը*, 285:

127 «Թուրք ժամանակակից կապիտալի աղբյուրը հայկական և հունական գույքն է», https://akunq.net/am/?p=42354, դիտվել է՝ 30.07.2022:

128 Ասատրյան, *Հայկական Զմյուռնիա. ձեռագրական ժառանգությունը*, 523-524:

129 Գալուստեան, *Զմիւռնիա եւ Զմիւռնիոյ հայ գաղութը*, 319-321:

130 Գրիգորյան, Բրուտյան, *Զմյուռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր*, 8:

131 Ս. Ամատեան, «Իզմիրի Հայ գաղութը», *Թէոդիկ* Ամէնուն տարեցոյցը, 1913, 7-րդ տարի, տարեգիրք (Կ.Պոլիս, Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1913), 181:

132 Յ. Կ. Պէշկէօթիւրեան, «Իզմիրի արիւնոտ ճակատագիրը», *Հայաստանի կոչնակ* (1922), 46, 1494:

ֆրանսիացի բանաստեղծ Ալֆոնս դը Լամարթինը «Արևելքի աստղ» է անվանել, մի քանի օրվա ընթացքում հողակույտի է վերածվում: Քեմալականները, շարունակելով երիտթուրքերի կիսատ թողած գործը, արմատախիլ են անում Փոքր Ասիայի քրիստոնյա բնիկ ժողովուրդներին՝ հույներին և հայերին, և այս տարածաշրջանից ջնջում նրանց ստեղծած մշակութային մեծարժեք հուշարձանները: Զմյուռնիայի աղետալի փլուզումը վերջին կործանարար հարվածն է հասցնում Փոքր Ասիայի քրիստոնեությանը և քրիստոնեական քաղաքակրթության ստեղծած արժեքներին, ինչը մեծ կորուստ է ոչ միայն հայ և հույն ժողովուրդների, այլև համաշխարհային քաղաքակրթության համար:

THE ECONOMIC SITUATION OF THE ARMENIANS OF SMYRNA BEFORE THE FIRST WORLD WAR AND DEPRIVATION OF PROPERTY IN 1922

Anahit Kh. Astoyan
Researcher at the Mesrop Mashtots Matenadaran, Armenia

SUMMARY

On the eve of the First World War, the trade, crafts and industry of Smyrna, which were of great economic importance for the Ottoman Empire, were almost entirely concentrated in the hands of Armenians and Greeks. During the First World War, the Turkification of the country's economy began with the appropriation of the property of Armenians and Greeks who were subjected to genocide by the Young Turks. Mustafa Kemal, heir to the political practice of the Young Turks, continued their unfinished business. The massacre of the Armenians and Greeks of Smyrna by the Kemalists in September 1922 gave the Turks the opportunity to finally get rid of their powerful rivals in the economy and seize their property. Thus, the property of Armenians and Greeks became the basis of the national capital of today's Republic of Turkey.

Key words: Armenians of Smyrna, Kemalists, confiscate property, Turkification of the economy.

ЭКОНОМИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ АРМЯН СМИРНЫ ПЕРЕД ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНОЙ И ИХ ЭКСПРОПРИАЦИЯ В 1922 ГОДУ

Анаит Х. Астоян
Научный сотрудник Матенадарана имени Месропа Маштоца, Армения

РЕЗЮМЕ

Накануне Первой мировой войны торговля, ремесла и промышленность Смирны, имевшие большое экономическое значение для Османской империи, почти целиком были сосредоточены в руках армян и греков. В годы Первой мировой войны тюркизация экономики страны началась с присвоения имущества армян и греков, подвергшихся геноциду младотурками. Мустафа Кемаль, наследник политической практики младотурок, продолжил их незаконченное дело. Резня кемалистами армян и греков Смирны в сентябре 1922 г. дала туркам возможность окончательно избавиться от своих могущественных соперников в экономике и завладеть их имуществом. Таким образом, собственность армян и греков стала основой национального капитала сегодняшней Турецкой Республики.

Ключевые слова: имущества армян, кемалисты, резня армян и греков, тюркизация экономики.

REFERENCES

Alpoyachyan, Arshak. *Յուշամատեան Կուտինահայերու* [Memory-Book of Kutahya Armenians]. Beirut: Tonikyan, 1961;

Astoyan, Anahit. *Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ.* [Robbery of the Century: Deprivation of Properties of Armenians in the Ottoman Empire in 1914-1923]. Yerevan: Matenadaran, 2013;

Chormisyan, Levon. *Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան* [A Panorama of a Century of History of Western Armenians]. V. A, Beirut: K.Tonikyan and Sons, 1972;

Dadayan, Khachatur. *Հայոց առևտրատնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում* XVդ.-1915 թ. [Armenian Commercial and Economic Activities in the Territory of Present-day Turkey in 15th century - 1915]. Yerevan: Gasprint, 2012;

Dadayan, Khachatur. *Հայոց տնտեսական ցեղասպանություն: Հայերի տնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում մինչև 1915 թվականը* [Armenian Economic Genocide. Economic activities of Armenians in the territory of present-day Turkey until 1915]. Yerevan: Edit Print, 2016;

Demoyan, Hayk. *Հայկական սպորտը և մարմնակրթությունը Օսմանյան*

կայսրությունում [Armenian Sports and Physical Education in the Ottoman Empire]. Yerevan: AGMI, 2009;

Eprikyan, S. *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան* [Illustrated Natural Dictionary] V. 1, book 1, Venice: St. Lazarus, 1903;

Gabikian, Karapet. *Եղեռնապատում Փոքրուն հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ* [The History of the Catastrophe of Armenia Minor and its Great Capital Sebastia]. Boston: Hairenik Publishing House, 1924;

Galustian, G. *Զմիւռնիա եւ Զմիւռնիոյ հայ գաղութը* [Smyrna and the Armenian Community of Smyrna]. Greek Armenian Almanac. 2nd Year. Athens: "Nor Or" Publishing, 1928;

Grigoryan, Asya and Brutyan, Vachik. *Զմյուռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր (19-րդ դարի սկզբից մինչև 1922 թ.)* [Outlines of the History of Smyrna-Armenian Educational and Cultural Life (from the Beginning of the 19th Century to 1922]. Yerevan: Iravunq, 2007;

Levon, Vardan. *Ժամանակագրութիւն Հայկական տասնհինգի, 1915-1923* [The Chronology of the Armenian Fifteen, 1915-1923]. Beirut: Atlas, 1975;

Palyan, Trdat. *Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին* [List of Armenian Manuscripts from Caesarea, Smyrna and Surroundings]. Yerevan: Qnnaser, 2002;

Simonyan, Petros. *Յուշամատեան: Հայկական Զմիւռնիան* [Memory-Book. Armenian Smyrna]. Paris: Arax, 1936;

Siruni, Y. *Պոլիս եւ իր դերը* [Constantinople and its Role]. V. 3, Lebanon: *The Armenian Catholicosate of the Great House of Cilicia*, 1987;

Teodik, *Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին աղէտալի 1915 տարիին* [Armenian Clergy's and its Congregation's Golgotha in the Horrible Year 1915]. New York: St. Vartan Press, 1985;

Tsotsʼikyan, S. *Արեւմտահայ աշխարհ* [Western-Armenian World]. New York: A. Y., Leylekyan, 1947;

Zohrap, Grigor. *Երկերի ժողովածու* [Collection of Works, v. 3]. Yerevan: Museum of Literature and Art, 2002;

Զմիւռնիահայ կեանքը զինադադարէն յետոյ: Միաւոր փլուզումը [Armenian Life in Smyrna after the Armistice. The Terrible Collapse]. Athens: Nor or, 1924;

Վիճակագոյց Ազգային վարժարանաց Թուրքիոյ [Status of National Schools of Turkey], book 1, Constantinople: Y. Matteosyan, 1901.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Անահիտ Խ. Աստոյան – Մաշտոցյան Մատենադարանի հայցորդ, գիտաշխատող:

Ուսումնասիրության ոլորտները՝ Հայոց ցեղասպանություն, հայերի գործունեությունը Օսմանյան կայսրության զինված ուժերում, վարչական համակարգում, տնտեսական և մշակութային կյանքում:

Էլեկտրոնային փոստի հասցե՝ anahitas@mail.ru

Anahit Kh. Astoyan – PHD student at the Matenadaran (Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts), Researcher.

Research fields – Armenian Genocide, Armenians in the Ottoman Empire, economic, administrative, cultural, military activities of Armenians in the Ottoman Empire.

E-mail address: anahitas@mail.ru

Анаит Х. Астоян – соискатель Института древних рукописей Матенадаран имени Месропа Маштоца, научный сотрудник.

Сферы исследований: Геноцид армян, деятельность армян в вооруженных силах, в административной системе, в экономической и в культурной жизни Османской империи.

Адрес эл. почты: anahitas@mail.ru